ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1917-1918 ԹԹ. ԹՈՒՐՔ–ԹԱԹԱՐԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇՄԱՆ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

20-րդ դարասկզբի հայ ազատամարտի անխոնջ նվիրյալ Ռուբեն Տեր-Մինասյանը հայ ժողովրդի համար իր ապրած բախտորոշ ժամանակաշրջանում բազմաթիվ անգամ հանդես է եկել որպես պատասխանատու անձնավորություն և գրեթե միշտ պատվով է կատարել իրեն վերապահված պարտականությունը: Առանձնապես կարևոր է Ռուբենի դերը 1917-1920թթ. Հայաստանում թուրք-թաթարական խռովությունների ճնշման և հայ գաղթականների վերաբնակեցման գործում:

1915թ. Սասանի հերոսամարտից հետո Ռուբենն անցնում է Կովկաս: Սակայն կարճ ժամանակ անց Թիֆլիսի Քաղաքների միությունը լիազորում է նրան անցնել Խնուս և զբաղվել թուրքական յաթաղանից խույս տված և բախտի քմահաճույքին մատնված հայ բնակչության հարցերով: Դեռևս Խնուսում եղած ժամանակ Ռուբենը մտահոգված էր հայ գաղթականության տեղավորման հարցով: Հայաստանում ահագին գաղթականություն էր հավաքվել: Սակայն երկիրը փոքր էր, տնտեսապես քայքայված և ամենագլխավորը՝ Երևանի և Ալեքսանդրապոլի շրջաններում լավագույն հողերի վրա նստած էին թուրքերն ու թաթարները, մինչդեռ հարյուր հազարավոր հայեր անտուն, անօթևան էին դարձել և ենթարկվում էին ամեն տեսակ զրկանքների: Հայոց ազգային համախոհրդակցության աշխատանքներին մասնակցելու համար Թիֆլիս մեկնելուց առաջ Ռուբենը Խնուսում իր զինակիցներին (Մասունցի Մուշեղ, Հ. Ամատունի և ուրիշներ) բացատրում է հայությանը Հայաստանում տեղավորելու ծրագիրը: Նա ցույց է տալիս իր կողմից գծված մի քարտեզ, որի վրա նշված էին այն բոլոր վայրերը, ու պետք է տեղավորվեին Արևմտյան Հայաստանի շրջաններից եկած գաղթականները[1]:

Ռուբենի Թիֆլիս մեկնելուց հետո նրա հրահանգով իր զինակիցները պետք է անցնեին Երևան և Տարոնի ժողովրդին Ալագյազի շրջանում տեղավորելու միջոցներ ձեռնարկեին:

Ռուսական ընդհանուր նահանջի հետ Խնուսից նահանջում է 60-70000 մարդ՝ մեծ մասամբ տարոնցիներ: Նահանջի ճանապարհին թուրքերը և քկղերը արգելքներ են հարուցում և կռիվների տեղիք տալիս, որոնց ընթացքում վերակազմվում է սասունցիների գունդը, (ղեկավարներից էին Մուշեղը, Չոլոն, Մորուք Կարոն, Փեթարցի Մանուկը, Կարո Սասունին և ուրիշներ)[2]: Այդ օրերին Անդրանիկը, տեսակցելով Մուշեղին և Փեթարցի Մանուկին, թերահավատորեն է նայում նրանց բռնած գործին՝ պատճառաբանելով, որ Ալագյազի շրջանում գաղթականներ բնակեցնելու համար պետք է գրավել Թալինի բերդը, ինչը այդ պահի դրությամբ անկարելի է համարում: Մուշեղը պատասխանում է, որ Ռուբենից համապատասխան նախագծով հարձակման հրաման են ստացել և պետք է այն իրականացնեն: Ռուբենը Թալինի բերդի վրա հարձակման նածագիծը կազմելիս հաշվի էր առել բոլոր մանրամասնությունները:

Ինչևէ, սասունցիների գունդը՝ մոտ 500 հոգի, նախապատրաստվելով, նախ գրավում է Ալագյազի մի քանի գյուղեր, ապա՝ պաշարում Թալինի բերդը: Վերջինս ռազմական բացառիկ նշանակություն ուներ Հայաստանի համար: Այն ոչ միայն «փշխում» էր Էջմիածնի և Աշտարակի վրա, այլև տևական սպառնալիք էր Երևանի համար: Մասունցիները բերդը գրավելու համար իրենց ուժերը բաժանում են երեք թևի: Հյուսիսից, հարավից և կենտրոնից միաժամանակյա հարձակումով կարողանում են ճեղքել թուրքերի պաշտպանությունը և ներխուժել բերդի դռներից ներս: Թուրքերը փախուստի են դիմում՝ սասունցիներին թողնելով մեծ քանակությամբ զենք, զինամթերք, անասուններ և այլն: Հետագայում, Մարդարապատի և Բաշ-Ապարանի կռիվների ժամանակ ավելի պարզ երևաց Թալինի բերդի գրավման բացառիկ նշանակությունը:

Ռուբենի մշակած ծրագրով հնարավոր է դառնում շատ կարճ ժամանակամիջոցում Ալագյազի շրջանի լքված բնակավայրերում մոտ 70000 գաղթականների տեղավորել:

Հայաստանը հայ գաղթականներով վերաբնակեցնելու իր ծրագիրը Ռուբենը շարունակեց իրականացնել Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ևս:

1918թ. օգոստոսին Ռուբենին հանդիպելու համար Ալագյազից Երևան են գալիս նրա հին մարտական ընկերները՝ Փեթարցի Մանուկը, Չոլոն, Մորուք Կարոն, Մուշեղը, և նորից խորհրդակցում գաղթականների տեղավորման ծրագրի շուրջ: Ռուբենը հանգամանորեն քացատրում է այն ամենը, ինչ խոսել էր Խնուսում ավելի քան մեկ տարի առաջ: Այդ մասին Մասունցի Մուշեղը պատմում է. «Ռուբէն այդ օր մեր առջեւ դրաւ

գործունեության ամբողջ ծրագիր մը ավելի լայնն ու ընդարձակը՝ ինչ որ պարզած էր Խնուսի մէջ: Մեղանին վրայ փռած էր իր նշանաւոր քարտեսը, որու վրայ յետին մանրամասնութեամբ նշանակուած էին Հայաստանի գիւղերն ու քաղաքները՝ իրենց ունեցած բնակչութեան տեսակներովն ու այլազանութեամբը»[3]:

Բացատրութիւններ տալով Հայաստանի վիճակի և իր ծրագրերի մասին՝ Ռուբենը Հայաստանը համեմատում է տխուր և ապրելու հնարաւորութիւններից զրկված մի մանուկի հետ: Սակայն նա հույս է հայտնում, որ կառավարությունը շուտով կկարողանա սովի և համաճարակի դեմն առնել: Այս գործում նա էական է համարում հայ ժողովրդի տոկունությունը. «Մեր ժողովուրդն ալ սակաւապետ է եւ կրնայ քար ծամել, քարէն հաց հանել, ինչ որ մտահոգիչ է ապագայի համար, ատիկա Հայաստանի բնակչութեան ներկայ դիմագիծն է, արուեստական կերպով ստեղծուած»[4]: Անդրադառնալով իր ծրագրերին՝ Ռուբենը քարտեզի վրա ցույց է տալիս այն շրջանները, որտեղ հաստատվել էին հայ գյուղացիության ձեռքից լավագույն հողերը բռնագրաված թուրքերն ու թաթարները: Նրա համոզմամբ գոյատևման անհրաժեշտ նախապայման էր այդ անարդարության սրբագրումը: «Հայուն երկիրը, հայուն հողը պետք էր իր ժողովրդի զաւակներուն սեփականութիւնը դառնար, գաղթականութիւնը պետք էր տեղաւորուէր անոնց վրայ, որպեսզի իրաւունք ունենայինք ըսելու, որ երկիր ունինք ու աւելի վստահութեամբ նայելու ապագային վրայ»,-շարունակում է նա[5]:

Ռուբենի մոտ հավաքված խմբապետները լուռ լսում նրա բացատրությունները և սպասում էին գործնական հրահանգների: Հասկանալով նրանց միտքը, Ռուբենը քարտեզի վրա ցույց է տալիս Ճղնի ձորի, Սիլիտերեի, Չիմենքենդի և Բոյուք Վեդիի ընդարձակ շրջանները: Նա խորհուրդ է տալիս, որ ամեն ինչ առանց աղմուկի կատարվի, առանց կառավարության մասնակցության: Խմբապետները հաշվետու պիտի լինեին միայն իրեն և իր միջոցով՝ կուսակցությանը: Խստիվ պատվիրում է ապահովել գաղտնապահությունը: Նա այս պարագան ընդգծում էր ոչ միայն արտաքին թշնամիներին զգոնության չբերելու, այլև նոր բացվող խորհրդարանի ու կառավարության որոշ «խոնքի սիրահարների» խոսելու նյութ չտալու համար[6]: Միջոցառման մասին չպիտի իմանային նաև կուսակցական շրջանակները, որոնց մեծ մասի ընկերվարական մտածելակերպն ու հոգեբանությունը անհնարին պիտի դարձներ նման գործողության իրականացումը Հայաստանի Հանրապետության սահմաններում:

Ռուբենն իր խմբապետներին զգուշացնում է, որ իրենց կատարած գործի համար պատասխանատու են նաև կուսակցության առաջ: Ծրագիրը նա հղացել էր՝ խորհրդակցելով միայն Արամ Մանուկյանի հետ,

ծածուկ պահելով այն կուսակցական ղեկավար շրջանակներից[7]: Օրինակ՝ երբ սասունցի խմբապետները այս նպատակով փամփուշտ էին տեղափոխում և Քանաքեռում տեղակայված պետական զորքը արգելք է հանդիսանում, դրությունը փրկում է Արամ Մանուկյանի կողմից ստորագրված արտոնագրի առկայությունը[8]:

Խմբապետ Մուշեղը պատմում է, որ իրենց առաջին գործը լինում է «մաքրել Դարալագեազի շրջանը եւ մաս մը ժողովուրդ տեղաւորել այնտեղ»[9]: Դրանից հետո անցնում են ծրագրավորված մեծ գործողությունների: Ճղնի ձորի գործողությունը տևում է 5 օր: Ազատագրված բնակավայրերում անմիջապես տեղավորվում են գաղթականները: «Յարձակումներէն եւ յաջողութիւններէ ետք, ժողովուրդը կը հոսեր գիւղերէն ներս, տէր դառնալու համար ոչ միայն իր հողերուն , այլ իր պապենական գոյքերուն: Մեծ մասամբ այդ գոյքերը հայկական դրոշմ ունէին, արձանագրութիւններ, խաչեր եւ այլն»[10]:

Ճղնի ձորի բնակեցումից հետո Ռուբենն անմիջապես հրահանգում է անցնել Սիլիտերեին: Այս շրջանն ավելի ընդարձակ էր, թշնամին՝ ավելի ուժեղ և ամուր: Ընդ որում նրա ազատագրումը կարևոր էր ոչ միայն գաղթականներին տեղավորելու ստումով, այլև այն պատճառով, որ գտնվում էր մայրաքաղաք Երևանի թիկունքում և տևական վտանգ կարող էր սպառնալ Հայաստանի անկախությանը: Տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո, չնայած բուռն դիմադրությանը, սասունցի խմբապետներին կարճ ժամանակամիջոցում հաջողվում է ազատագրել նաև Սիլիտերեն: Ռուբենը, որ վայրկյանը վայրկյանին հետևում էր գործողություններին, շտապում է ժողովրդին տեղավորել ազատագրված բնակավայրերում: Ճղնի ձորի և Սիլիտերեի գործողությունների ընթացքում հայկական կողմը տալիս է ընդամենը 25 զոհ: Ռուբենն այնուհետև խմբապետներին հրահանգում է անցնել Չիմենքենդի և Բոյուք Վեդիի շրջանները: Սակայն, ի տարբերություն նախորդ շրջանների, այստեղ պետք էր ավելի զգույշ լինել և չշտապել: Թշնամու զբաղեցրած տարածքը բավականին ընդարձակ էր, լուրջ դժվարություններ կարող էր հարուցել նրա աշխարհագրական դիրքը: Բացի այդ այս երկու շրջաններում մեծ թվով թուրքական կանոնավոր զորքեր կային՝ թնդանոթներով և գնդացիրներով, որոնք ծպտված մնում էին բազմաթիվ գյուղերում[11]:

Թշնամու մասին այս տեղեկություններն իմանալով հանդերձ Ռուբենն ու իր զինակիցները չէին վարանում: Սակայն այս անգամ դեպքերը այլ հունով են զարգանում, Ադրբեջանի բողոքի հիման վրա Երևան է գալիս մի քննիչ հանձնախումբ՝ Անդրկովկասում Անտանտի հանձնակատար գնդապետ Հասկելի գլխավորությամբ[12]: Քննիչ հանձնախումբը պետք է ստուգումներ կատարեր արդեն հայերով վերաբնակեցված տարածքներում: Ռուբենի բացատրությունները լսելուց հետո, խմբապետնե-

ը պատրաստվում են հերքելու մեղադրանքները: «Մեզի կը մնար միջոցներ ձեռք առնել ու փաստել, որ անտեղի է կատարուած բողոքը, ոչ մէկ ատեն Ճղնի ձորը, Սիլիտերէն, Բաշգեառնին, Ալագեազը, Դարալագիազը թրքական չեն եղած: Վկայ էին այս իրողութեան հայկական գերեզմանոցներն ու սրբավայրերը, տնական կահկարասիներն ու ժողովուրդին դիմագիծը»,-պատմում է խմբապետ Մուշեղ Ավետիսյանը[13]:

Խմբապետներից Չոլոն և Մորուք Կարոն, իբրև առանձին շրջանների ընդհանուր պետեր, գոհացուցիչ և տրամաբանական պատասխաններ են տալիս ստուգողներին, նշելով, որ «հայերը դարերէ ի վեր տէրն էին այդ գիւղերուն, թուրքեր, թաթարներ անշուշտ եղած էին: Սակայն անոնք քոչուորներ էին, որոնք Ատրպէյճանէն կու գան եւ աշնան մեկնին իրենց տեղերը: Բախումներ եղած էին, պէտք չէր ուրանալ, սակայն պատերազմի այդ տարիներուն որտեղ կռիւ չէր պատահած»[14]:

Քննիչ հանձնախումբը Երևանից մեկնում է Թիֆլիս այն համոզմունքով, որ ադրբեջանցիների ամբաստանությունները առնվազն չափազանցված են: Օգոստոսի 22-ին Երևանից հեռանալուց առաջ Հասկելը խոստանում է դեպքերի պատճառների մասին (շրջափակում, անհնազանդություն կառավարությանը) զեկուցել Փարիզի Վեհաժողովին և օգնություն խնդրել Հայաստանի համար: Սակայն, երբ նա Թիֆլիսից անցնում է Բաքու, այնտեղ օգոստոսի 29-ին Ադրբեջանի կառավարության հետ պայմանագիր է ստորագրում, որի համաձայն Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներում պիտի հաստատվի «չեզոք գոտի», որի կառավարությունը պիտի հանձնվի գնդապետ Հասկելի նշանակած ընդհանուր նահանգապետին[15]: Հայաստանի Խորհրդարանը այս հարցը քննելուց հետո Թիֆլիս է ուղարկում Ռուբենին և Ա. Խատիսյանին[16]: Նրանք բացատրություն են տալիս Հասկելին, որի արդյունքում Հասկելը չեղյալ է հայտարարում Ադրբեջանցիների հետ կնքած պայմանագրի ուրոշ կետեր: Բայց այս անգամ էլ Ադրբեջանն է մերժում ընդունել այդ համաձայնությունը:

Քննիչ հանձնախմբի միջամտությունից հետո մի պահ ստեղծվում է համեմատաբար խաղաղ շրջան, սակայն Ռուբենը Կարսի դաշնակցական մարմինների և զինվորականների խնդրանքով ստիպված է լինում զսպելու նաև Ալեքսանդրապոլի և Կարսի միջև ընկած Արգինայից մինչև Զաբյուղար (Զարիշատ գավառ) տարածվող ըմբոստ թրքության: Այստեղի թուրքերի թիվը համեմատաբար այնքան էլ մեծ չէր, սակայն նրանք իրենց զբաղեցրած դիրքով խանգարում էին հանրապետության բնականոն կյանքի ընթացքը, իրենց ձեռքն էին վերցրել Ախուրյան գետի վրա գտնվող Արգինայի կամուրջը, որով անհնարին էր դառնում Կարսից Ալեքսանդրապոլ և հակառակ ուղղությամբ ճամփորդելը, իսկ երկաթուղին աշխատում էր միայն զրահապատի ուղեկցությամբ: Այս շրջանը

հնազանդեցնելու ծրագիրը մշակելուց հետո Ռուբենն անցնում է հատուկ գործողությունների: Մեծ դեր է խաղում զրահապատ գնացքը: Գործողությունների արդյունքում հնարավոր է լինում վերջնականապես թե Զարիշատ գավառը, թե Արգինայի կամուրջը ազատել թուրքերից:

Այս դեպքերից հետո Ռուբենն իր զինակիցներին կրկին հավաքում է իր բնակարանում: Նրանք նորից ուսումնասիրում են այն քարտեզը[17], որտեղ առանձին նշված էին արդեն ազատագրված շրջանները և դեռ չազատագրված Չիմենքենդը, Զանգիբասարը և Բոյուք Վեդին: Այստեղ որոշվում է ազատագրել նաև Զանգիբասարը:

Զանգիբասարը մայրաքաղաք Երևանի համար շատ կարևոր դիրքում ուներ և թուրքական ավազակախմբերի իսկական որջ էր: Այստեղի կռիվներն անցնում են սպասվածից թեժ մթնոլորտում: Սակայն հայերին հաջողվում է 5 օրում, տալով ընդամենը 15 զոհ, լուծել իրենց առջև դրված խնդիրը: Թուրքերը նահանջում են Իգդիրի ուղղությամբ: Զանգիբասարի ավելի քան 20 գյուղեր ևս վերաբնակեցվում են հայ գաղթականներով:

Չիմենքեդի և Բոյուք Վեդիի ազատագրումը հետագայում Ռուբենն իրականացնում է ռազմական և ներքին գործոց նախարար եղած ժամանակ:

Ռուբենի հղացմամբ կատարված այս գործողությունները ինչպես և սպասելի էր, աղմուկ են առաջացնում ցավոք, նաև Երևանում: «Երեւանի մէջ իրարանցում ձգած էին կարգ մը մարդիկ... »,- վերհիշում է խմբապետ Մուշեղը[18]: Աղմուկ բարձացնողները ոչ միայն այն կուսակցություններն էին (հայ սոցիալիստ-հեղափոխականներ, հայ սոցիալ-դեմոկրատներ), որոնք Հ.Յ.Դաշնակցության որդեգրած քաղաքականության հանդեպ շատ հարցերում ընդդիմադիր կեցվածք ունեին, այլև Հ.Յ.Դ. շարքերում գտնվողները[19]: «Սոցիալիզմի անունով ճառող այդ մարդիկը չէին ուզեր ըմբռնել, որը հայրենիք ունենալու համար անհրաժեշտ էր ժողովուրդ», իսկ այդ ժողովուրդն ունենալու համար պետք էր փրկել գաղթականներին, նրանց վերաբնակեցնելով պատմականորեն հայկական տարածքներում:

Հարկ ենք համարում նշել, որ գաղթականների վերաբնակեցման հարցում Արամ Մանուկյանը Ռուբենի համար ամենամեծ արժեք ներկայացնող գաղափարակիցն էր: Թե կուսակցական, թե ոչ կուսակցական շարքերից տեղացող մեղադրանքներն ու դատապարտությունները Ռուբենը տանում էր գործը հաջողությամբ վերջացնողին հատուկ ժպիտով: «Քարկոծէք, որքան ուզում եք, ժողովուրդն ինձ հետ է, դուք էլ ինձ հետ կը լինէք, եթէ ոչ այսօր, անպայման վաղը», կարծես այդ էր նրա ժպիտի իմաստը[20]:

1918թ. Ռուբենի ղեկավարմամբ իրականացրած այս ոչ դյուրին գործողությունը ռազմավարական մեծ նշանակություն ունեցավ: Միայն այդ ծրագրի իրականացումից հետո վերացավ մեծ չափով Երևանի վրա կախված սպառնալիքը: Ռուբենի ձեռնարկումների շնորհիվ էր, որ փետրվարյան ապստամբությունից հետո կարելի եղավ Զանգեզուր անցնել:

Ռուբենի վարած քաղաքականությունը գնահատելիս պետք է նկատի ունենանք, որ նրա գործողությունների արդյունքում բազմաթիվ հայկական բնակավայրեր տրամադրվեցին հարյուր հազարավոր գաղթական ժողովրդին, որ կանգնած էր բնաջնջման եզրին:

Ռուբենի կողմից իրականացրած ծրագիրը արժևորվում է մեկ այլ փաստով ևս. Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում հարևան Ադրբեջանը ուներ մի ծրագիր, որով տարածքային պահանջներ էր ներկայացնում Հայաստանին, որի փայլուն ապացույց են 1920թ. Երևանում հրատարակված փաստաթղթերը[21]: Այս փաստաթղթերը հիշատակվում են նաև Ռուբենի հուշերում[22]: Նրանցում արտացոլված է Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչների և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի միջև հեռագրային կապի բովանդակությունը: Այստեղ հստակ երևում է Ադրբեջանի կողմից Հայաստանը քայքայելու ձգտումը: Եվ պարզապես անիրական է Ալեքսանդր Մյասնիկյանի այն կարծիքը, թե Հայաստանի մահմեդականները անզեն և խաղաղ են եղել[23]: Կարծում ենք, որ Մյասնիկյանը ավելի շատ նպատակ է ունեցել պարսավելու դաշնակցականների գործունեությունը:

Ադրբեջանի հավակնած տարածքների մեջ, Ղարաբաղից, Նախիջևանից և Զանգեզուրից բացի, մտնում էին նաև Զանգիբասարը, Վեդիբասարը, Դարալագյազը, Սուրմալուն, Կողբը: Այս մի քանի շրջանները հետագայում չհայտնվեցին Խորհրդային Ադրբեջանի կազմում, որովհետև արդեն հայաբնակ էին[24]: Ռուբենի գործադրած ջանքերի շնորհիվ, որոնք շարունակվեցին նաև 1920թ., հնարավոր եղավ կործանիչ հարված հասցնել Արարատյան դաշտավայրում և հարակից շրջաններում քսանից ավելի «ինքնորոշված» մանր ու խոշոր թուրք-թաթարական իշխանություններին, որոնք ըմբոստանալով պետության դեմ, Հայաստանից «առանձնանալու» նկրտումներ էին հանդես բերում:

Ապստամբ շրջանների հնազանդեցումը բխում էր նաև քանդված տնտեսությունը վերականգնելու անհրաժեշտությունից: Մտեղծված իրավիճակը թույլ չէր տալիս զբաղվել ոչ նորմալ երկրագործությամբ, ոչ էլ առևտրով: Իսկ փախստական դարձած ժողովուրդը տառապում էր անգործությունից, մինչդեռ Հայաստանի շատ հոդեր թուրք-թաթարների ապստամբ կեցվածքի պատճառով անմշակ էին մնացել: Ոչ միայն պետությունը պետք է տնտեսապես տուժեր, այլև պետական մեծ ուժեր (ռս-

տիկանություն, զորք) պետք է տրամադրվեին հայկական շրջանները հարձակումներից պաշտպանելու համար:

Հետագայում Ռուբենի գաղափարը ավելի բյուրեղացավ ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում, որի ընդունած երկրի ներքին քաղաքականությանը վերաբերող բանաձևի համաձայն պետք էր «ամէնակտրուկ միջոցներով արմատախիլ անել ամէն հակայեղափոխական ու հակապետական շարժում, որ կողմից էլ որ դա կազմակերպուած լինի եւ ինչ ոյժերի վրայ էլ որ դա յենուի»[25]: Այս տեսության հիմնավորողը եղավ Ռուբենը: Ընդհանուր ժողովից հետո երկրում տիրող հանգամանքներն այնպիսին էին, որ պետական և կուսակցական գործիչները, որոնք նախկինում այս հարցում հակառակ էին Ռուբենին, ընդունեցին նրա տեսակետը:

STEPANYAN KHATCHATUR

THE ROLE OF ROUBEN TER-MINASYAN IN STIFLING OF TURKISH-TATAR REBELLIONS AND IN RESETTLEMENT OF ARMENIAN REFUGEES IN 1917-1918

(Summary)

After withdrawal of Russian troops the number of Armenian refugees from Western Armenia increased. However it was hard to find a settlement in Eastern Armenia, because some important roads and settlements were under control of Turkish population. R.Ter-Minasyan undertook the solution of the problem and with a special program successfully completed it. The Article examines that issue.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. 7, Երևան 1990, էջ 102:
2. Նույն տեղը, էջ 104:
3. Նույն տեղը, էջ 109:
4. Նույն տեղը:
5. Նույն տեղը, էջ 110:
6. Անդ:
7. Ա. Աստուածատրեան, Ռուբէնը, «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, 1955թ., հունվար, էջ 85:
8. Ռուբեն, նշվ. աշխ., հ. 7, էջ 111:
9. Նույն տեղը, էջ 112:
10. Անդ:
11. Նույն տեղը, էջ 113:
12. Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 78:
13. Ռուբէն, նշվ. աշխ., հ.7, էջ 114:
14. Անդ:

15. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1992, էջ 323,Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 78:
16. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.50, 2-րդ մաս, թ.128, հմմտ. «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագիր, 1993թ.,թիվ 1-2, էջ 299:
17. Ռուբենի մահից հետո, վերհիշելով նրա քաղաքականությունը, Մալխասը պատմում է, թե ինչպես էր Ռուբենն ամեն մի շրջանը թուրքերից ազատագրելուց հետո քարտեզի վրա այն ներկում կապույտ մատիտով և անհամբեր սպասում, որ քարտեզը միագույն դառնա(տես Ա. Աստուածատրեան, Հայաստանի հայացումը, «Հայրենիք» ամսագիր, 1957թ., մայիս, էջ 33):
18. Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, էջ 115:
19. Ա. Աստուածատրեան, Ռուբէնը, «Հայրենիք» ամսագիր, 1955թ., հունվար, էջ 86:
20. Նույն տեղը:
21. «Հայաստանում Ադրբեջանի ծավալած քայքայիչ գործունեությունից», Երևան, 1920:
22. Ռուբէն, նշվ. աշխ., հ.7, էջ 193-205:
23. Ա. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 377:
24. Սուրմալուն և Կողրը Թուրքիային տրվեցին այլ հանգամանքների թելադրանքով:
25. «Քաղուածքներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհ. Ժողովի որոշումներից», Երեւան, 1920, էջ 8: